Նիսաից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր հացկերոյթ, ուր նոյնպէս խօսուեցին տաք ճառեր՝ երդուելով, որ այսուհետև երբեք չեն կրկնուի անցեալի մռայլ օրերը:

Նման հաւաստիացումներ սկսեցին հասնել և ուրիշ շրջաններից: Մարտի սկզբին կառավարութիւնը ստացաւ հետևեալ դիմումը. «Մենք՝ Օրդով, Բարբար և այլ քրդական գիւղերի ներկայացուցիչներս այսօր ներկայանալով Իգդիրի բանակի հրամանատար Սեպուհին՝ յայտնում ենք ձեզ, որ պարտաւոր ենք սրտանց ընդունել Հայաստանի Հանրապետութեան հպատակութիւնը և որպէսզի այդ լինի Արարատի ստորոտի բոլոր գիւղերի կողմից, մեզ մնում է խորհրդակցել թէ նրանց և թէ մեր ցեղապետների հետ: Եթէ նոյնիսկ նրանք չհամաձայնեն, մենք նորէն ենթարկուելու ենք, թէկուզ առանց նրանց համաձայնութեան: Աւդալ Մատօ Օղլի, Մատօ Խազի Կանրօ Օղլի, Հասօ Սիբաշ Օղլի, Մամադ Խազի Օղլի, Ալօ Իսմայիլ Օղլի, Դաւրիշ Արա Օղլի, Ուսուֆ Սարօ Օղլի»:

Մարտ 15-ին նման բազմաստորագիր դիմում եկաւ Զըլդըրի շրջանի մահմետականներից, իսկ ապր. 25-ին Արդահանի մահմետականների ներկայացուցիչներից, որոնք բողոքում էին Ադրբէջանի գործակալների սադրանքների դէմ:

Նոյն օրերին կառավարութիւնը «հաւատարիմ հպատակութեան» դիմումներ ստացաւ և Միջագետքի եզիդիներից ու ասորիներից, որոնք ցանկութիւն էին յայտնում տեղափոխուել Հայաստան:

*

Շատ ժամանակ չանցած, չուտով պարզուեց Կարսի դէպքերի շուրջ ադրբէջանցիների հանած աղմուկի իսկական դրդապատճառը. մարդիկ նոր դէպքեր էին պատրաստում Ղարաբաղում, և անհրաժեշտ էր հասարակութեան ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձնել:

Պէտք է նկատել, որ օգոստ. 22-ի համաձայնութիւնը էական փոփոխութիւն չմտցրեց Ղարաբաղի դրութեան մէջ, ինչպէս և նոյեմբեր 23-ի համաձայնութիւնը չփոխեց Զանգեզուրի վիճակը: Նոյեմբ. 23-ից յետոյ էր, որ, ինչպէս տեսանք, զանգեզուրցիք մաքրեցին Օխչի ու Գեղայ ձորերը:

Նոյեմբերի վերջերին Զանգեզուրում Ա. Շահմազեանին փոխարինեց Ս. Մելիք-Եօլչեանը, որպէս քաղաքացիական մասի կոմիսար, իսկ զինուորական մասը ենթարկուեց զօր. Ղազարեանին: Սրանց դալով՝ Զանգեզուրը ձևականօրէն էլ կազմակերպուեց իբրև Հայաստանի մաս: Քաղաքացիական իշխանութիւնը ամփոփուեց վարիչների խորհրդի ձեռքում՝ Ս. Մելիք-Եօլչեանի նախագահութեամբ: Շրջանը բաժանուեց 2 դաւառի. 1) Բուն Զանգեզուր, Տաթև, Դարաբաս, Սիսիան՝ Զանգեզուրի դաւառ անունով, 2) Ղափան, Բաղաբերդ—Գեղայ ձոր, Արևիք և Գողթն՝ Կապար Գողթ անունով: Զինուորական տեսակէտից շրջանը բաժանուեց 3 մասի. 1) Սիսեան՝ հրամանատար Պ. Տէր-Դաւթեան, 2) Կապարդողթ՝ հրամանատար Գ. Նժդեհ և 3) Զանգեզուր: Իւրաքանչիւր շրջանի հրամանատարութեան կից կազմուեց զինուորա-